ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ
(ծննդյան 60-ամյակի առթիվ)

Բոլորից անվանի պատմաբան, հայագետ-արևելագետ Գագիկ Խորենի Սարգսյանի 60 տարին: Նա ծնվել է 1926 թ. ապրիլի 6-ին, Երևանում՝ հայտնի գրականագետ Խորեն Սարգսյանի ընտանիքում: Այժմ իր գիտահետազոտական կյանքի ծաղկումն ապրող Գագիկ Սարգսյանը մեզ է ներկայանում իբրև բազմակողմանի և խորագետ գիտնական, որի ուսումնասիրությունների ժամանակագրական ընդգրկումը ծավալվում է հին Արևելքից մինչև հայ ժողովրդի պատմության վայ; միջնադարը, երկու եզրերի կենտրոնում ունենալով, այսպես կոչված հելլենիստական դարաշրջանը:

Գագիկ Սարգսյանի ուսումնասիրությունների հաջողության գրավականն են՝ հին սեպագիր լեզուների, հունարենի, ժամանակակից մի քանի լեզուների իմացությունը, պատմաբանի բազմակողմանի ու լայն գիտելիքները և ամենակարևորը՝ ուսումնասիրողի տքնությունն ու շնորհքը: Գագիկ Սարգսյանը սկզբնաղբյուրների հիման վրա հաջողությամբ քննում և լուսաբանում է հելլենիստական Արևելքի և Հայաստանի սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային պատմության խրթին ու նվազ ուսումնասիրված հարցերը: Նրա գրչին են պատկանում 80-ից ավելի գիտական աշխատություն՝ մենագրություններ, հոդվածներ, հրապարակումներ՝ հայերեն, ռուսերեն, գերմաներեն, անգլերեն, ֆրանսերեն լեզուներով: Բայց ո՞րն է գլխավորը նրա գիտական հետազոտությունների բնագավառում. հայագիտությո՞ւնը, թե՞ արևելագիտությունը: Կարելի է ասել. թե՛ մեկը և թե՛ մյուսը՝ երկուսի միասնական զուգորդությամբ:

Հիմնավոր պատրաստություն ստանալով Լենինգրադի արևելագիտական դպրոցում, Գագիկ Սարգսյանը ձեռնարկեց ուշբաբելոնյան ժամանակաշրջանի հինարևելյան քաղաքի հարցերի ուսումնասիրությանը՝ սեպագիր սկզբնաղբյուրների հիման վրա: Նրան հաջողվեց բացահայտել հինարևելյան քաղաքի մի յուրահատուկ տիպ, որը նա բնորոշեց իբրև քաղաքացիական-տաճարական համայնք, ասաջացած լիիրավ քաղաքացիության հետ տաճարական անձնակազմի միաձուլմամբ: Սարգսյանի ուսումնասիրության առարկան հանդիսացան նաև այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք են հողային հարաբերությունների, ստրկության և ստրկատիրության բնորոշ առանձնահատկությունները հելլենիստական ժամանակաշրջանի Բաբելոնում, Սելևկյան թագավորության մեջ: Սեպագիր փաստաթղթերի հիման վրա Սարգսյանը քննարկել է երկու հին քաղաքակրթությունների՝ բաբելականի և հունականի առնչությունների և փոխազդեցությունների հարցերը:

Արևելագետ Սարգսյանի գիտական գործունեության մեջ կարևոր տեղ է գրավում աղբյուրագիտությունը՝ ասսուր-բաբելոնյան սեպագիր արձանագրությունների ուսումնասիրությունը և հրապարակումը: Իրականացնելով Պետական Էրմիտաժի (Լենինգրադ) սելևկյան ժամանակաշրջանի սեպագիր փաստաթղթերի հրատարակությունը, նա այդ աշխատանքները ավելի լայն ծավալով շարունակեց Բեռլինում (ԳԴՀ) և հրատարակեց Բեռլինի առաջավորասիական թանգարանի ֆոնդերում պահվող հելլենիստական շրջանին վերաբերող սեպագիր արձանագրությունների բնագրերը: Գերմանական Դեմոկրատական Հանրապետության գիտնականների հետ Սարգսյանը հրատարակության է պատրաստել Գերմանիայի և այլ երկրների թանգարաններում պահվող ուշ բաբելական-սելևկյան ժամանակների սեպագիր վավերագրերը՝ երկու հատորով:

Հայագետ Սարգսյանի գիտահետազոտական ուսումնասիրությունների առանցքը կազմեցին հայ ժողովրդի հելլենիստական դարաշրջանի սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային

պատմության, ինչպես և աղբյուրագիտության հարցերը: Հայագիտության բնագավառում նա աշխատանքը սկսվեց հելլենիստական դարաշրջանի քաղաքի ուսումնասիրությամբ, և դեռևս 1960 թ. Սարգսյանը լույս ընծայեց «Տիգրանակերտ» աշխատությունը, որով ապացուցեց հին Հայաստանում կիսաինքնավար քաղաքային համայնքի առկայությունը, նրա բնույթն ու առնչությունները հինարևելյան և հելլենիստական քաղաքների ձևավորման առանձնահատկությունների հետ:

Հին Հայաստանի ներքին կյանքի հասարակական հարաբերությունների հարցերը զտնվել են Սարգսյան պատմաբանի ուշադրության կենտրոնում և առանձին հոդվածներից բացի նա այդ հարցերին նվիրել է ընդհանրացնող աշխատություն՝ «Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ուղիների մասին» (1962): Աշխատության մեջ քննարկված են գյուղական բնակավայրերին, հողատիրությանը, հողօգտագործմանը, գյուղական համայնքին, սարկատիրական հարաբերություններին, քաղաքներին և քաղաքային տնտեսությանը, ինչպես և մշակութային զարգացմանը վերաբերող հարցեր: Այս աշխատությունը հին Հայաստանի հասարակական-տնտեսական զարգացման ուղիների լուսաբանության հաջողված փորձ է, որը միաժամանակ առաջադրում է այս ուղղությամբ հետագայում կատարելիք հետազոտությունների խնդիրները:

Գ. Սարգսյանի գիտահետազոտական աշխատությունների շարքում առանձնակի տեղ են գրավում հայոց պատմահոր՝ Մովսես Խորենացու «Հայոց պատմությանը» նվիրված ուսումնասիրությունները՝ «Մովսես Խորենացու Հայոց պատմության ժամանակագրական համակարգը» (1965) և «Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին» (1966): Վերջինիս պաշտպանությամբ Սարգսյանին շնորհվեց պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: Այս աշխատությունները նշանավորեցին Մովսես Խորենացու և նրա «Հայոց պատմության» հետ կապված պրոբլեմների ուսումնասիրության մի նոր ու բարձր աստիճան:

Գ. Սարգսյանը քննարկման առարկա դարձրեց նաև հայկական գրքի գյուտին նախորդող ժամանակների պատմագրության հարցերը: Պատմական աղբյուրների, հայ ժողովրդի պատմության մասին դրանց պարունակած տվյալների վերլուծությունը Գ. Սարգսյանը կատարել է գիտական բարձր մակարդակով, հելլենիստական դարաշրջանի աղբյուրների և հարևան երկրների պատմության հետ սերտ առնչակցությամբ:

Գ. Սարգսյանի պատմագիտական ուսումնասիրությունների ընդհանրացումն է հայ ժողովրդի պատմության ութ հատորյակի առաջին հատորում նրա գտեղած ընդարձակ բաժինը, որ ընդգրկում է հայ ժողովրդի հելլենիստական դարաշրջանի պատմությունը:

Հելլենիստական դարաշրջանի Հայաստանին, ընդհանրապես հելլենիզմի, մանավանդ ուշբաբելական սեպագիր արձանագրություններում Բաբելոնի, Սելևկյան թագավորության պատմությանը վերաբերող աշխատությունները Գ. Սարգսյանին ճանաչում բերեցին Սովետական Միությունում և նրա սահմաններից դուրս:

Գ. Սարգսյանը խմբագրել է մենագրական մի շարք աշխատություններ, ժողովածուներ, զգալի վաստակ ունի կադրերի պատրաստման գործում: Նա գիտահետազոտական աշխատանքը զուգորդում է գիտակազմակերպական գործունեության հետ: 1971 թ. սկսած իրև դիրեկտոր գլխավորում է գիտությունների ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտը, որն աճել ու դարձել է Մերձավոր և Միջին արևելքի երկրների, ինչպես և Հին արևելքի պատմության ու մշակույթի ուսումնասիրության ճանաչված գիտական հաստատություն: Նա Արևելագետների համամիութենական ընկերության հայկական մասնաճյուղի նախագահն է: Արդյունավետ գիտական լինելով, Սարգսյանը միաժամանակ եռանդուն գիտական-հասարակական գործիչ է, պարգևատրվել է ՀՍՍՀ պատվոգրով և պետական մրցանակով: Գագիկ Սարգսյանն ապրում է իր գիտական գործունեության վերելքի և ծաղկման շրջանը: Ցանկանք նրան ստեղծագործական նորանոր հաջողություններ:

ԹԱԲԿԵՆ ԱՌԱՔԵԼՅԱՆ
ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս